

A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD,
By R. W. Thomson, Brepols—Turnhout (Belgique), 1995, 324 p. (Corpus
Christianorum). Մատենագիտություն հայ մատենագրության մինչև մ. թ.
1500 թ., [կազմեց] Ռ. Վ. Թոմսոնը:

Որքանից թուրքերը ներկայիս արտասահման-
յան հայագիտության արդյունաշատ հեղինակ-
ներից է. հայտնի է հայ դասական հեղինակ-
ների (Ազաթանդուղոս, Խորենացի, Դավիթ Ան-
հաղթ և այլք) երկերի իր թարգմանություննե-
րով և նույն հեղինակներին կամ նրանց վերա-
բերող պատմա-բանասիրական խնդիրների ու-
սումնասիրություններով: Այժմ նա հանդես է
կիկլ ընդգրկման լայնությամբ և տարողու-
թյամբ ընդհանրական մի աշխատությամբ՝ Հայ
մատենագրության 11 դարի (V—XV դդ.) պատ-
մությունն ամփոփող մատենագիտությամբ: Եվ
քանի որ այս տեսակ աշխատանքներն ի դո-
րու են ևս պահպանվելու որևէ գիտության՝ սովո-
րականից ավելի զգալի առաջընթաց, ապա կա-
րող ենք վստահորեն հուսալ, որ սա արդեն
լինելու է նոր աշխատությունների հիմք ու
շարժառիթ:

Նախ արձանագրենք, որ կաղմոցն ընդգր-
կել է մինչև 1992 թ. ներսույալ տպագրված
նյութը (կան նաև 1993 թ. հրատարակված
որոշ միավորներ):

Մատենագիտության ժամանակա գր ա կ ա ն
վերջին սահմանը՝ 1500 թ., գրականության,
լեզվի կամ մշակույթի այլ դրսևորման որևէ
պարբերացման հետ կապ չունի, և, ըստ էու-
թյան, պատահական-ենթակայական է. աշխա-

տանքը սկզբնապես նախատեսված է եղել որ-
պես Գեորգ Բարդակչյանի հեղինակացությամբ
և մինչև 1920 թ. հայ գրականության պատ-
մությունն ընդգրկող մի գիրք: Այդուհանդերձ,
կազմողների հետազոտական նախասիրու-
թյունների տարբերությունը և աշխարհագրորեն իրա-
րից անջատ լինելը 1993 թ. սկսված բերին թե-
լադրել է գործի բաժանման սահման ընդունել
1500 թ.:

Ռ. Թոմսոնն սկզբից ևեթ նշում է, որ վեր-
ջին երեսուն տարվա ընթացքում հայագիտա-
կան հետազոտությունների նշանակալի զարգա-
ցում է նկատվել, հատկապես՝ ԱՄՆ-ում, որի
առաջատար համալսարաններում 1960 թ. հետո
հիմնվել են հայագիտության ամբիոններ: Այ-
նուհետև, կրկին նկատելով, որ հայագիտական
ուսումնասիրություններն ընդարձակվել են՝
ընդգրկված հետազոտողների, արժարժվող գի-
տական ասպարեղների և նրանց վերաբերող
հրապարակումների քանակով, մտավախությու-
ն է հայտնում, թե այսպիսի մի պահի հայագի-
տական մատենագիտություն հրատարակելը կա-
րող է անիմաստ թվալ, որովհետև տպագրվելու
պահին իսկ այն կարող է հնացած լինել: Այս-
տեղ էլ անմիջապես ավելացնում է, թե ելնե-
լով այն հանգամանքից, որ հայկական աղ-
բյուրներն ավելի լավ հայտնի և լայնորեն
դորձածվող են դարձել ոչ-հայ ուսումնասի-
րողների միջավայրում, ինքն անհրաժեշտ է
համարում ներկայացնելու ասպարեղի ներկա
վիճակի այս ամփոփույթ-մատենագիտությունը
(էջ 5):

Մենք էլ նկատենք, որ հայագիտության
այնպիսի բուռն, բազմաճյուղ և բազմարդյուն
զարգացում, որ երկրորդ աշխարհամարտից հե-
տո կա Հայաստանում, գուցե ուրիշ որևէ տա-
րածքում և ժամանակի ընթացքում չի եղել,
և ավելացնենք, որ վերըներյալ մտքերը են-

1 Բառացի թարգմանելու դիպքում պետք է
գրելինք՝ «Մատենագիտություն հայ դասական
գրականության», բայց քանի որ մեղանում հայ
դասական (հին V—XVIII դդ.) գրականության
գրիթն պաշտոնական և առավել կիրառական
անվանումը «մատենագրություն» բառով է, ուս-
տի գրախոսվող գիրքը նախընտրում ենք կո-
չել «Մատենագիտություն հայ մատենագրու-
թյան» ձևով: Գուցե այս՝ «Մատենագիտություն
մատենագրության» դուգորդված անվանումը մի
փոքր պակասնցնի այդ գույգ տերմինների այն-
քան հաճախակի՝ անցանկալի շփոթելու Շա-
րադրանքի մեջ, փակագծերի միջ նշանակելու
ենք գրախոսվող գրքի էջահամարները:

2 Գիտենք, որ արդեն հրատարակության
պատրաստ է նաև 1500 թ. հետո ծնված հեղի-
նակների՝ Գ. Բարդակչյանի պատրաստած մասը:

թաղրել ևն տալիս, թե Թոմսոնը նկատի ունի ոչ հայաստանյան և, նույնիսկ, ոչ հայկական հայագիտությունը, այլ՝ այն, որ Եվրոպայում և ԱՄՆ-ում ստեղծվում և հրատարակվում է լատինատառ այբուրենի վրա հիմնված լեզու-ներով:

Հեղինակն առաջին հերթին նպատակ է ունեցել հայագիտական աշխատանքների ո՛չ մասնագետ հետազոտողին ներկայացնելու մի ուղեցույց, որով նա կարողանա իրեն դեռևս սակավաթանոթ ասպարեղում գտնելու անհրաժեշտ նյութը: Հայերենին անհմուտ ուսումնաիրողին և ուսանողին նկատի ունենալով, ավելի շեշտված է ներկայացրել այլ լեզուներով հայ հեղինակների երկերի թարգմանությունները, նաև՝ ընդգրկել է ընտրված նյութերին վերաբերող՝ հետազոտական առավելակալից ալլալեզու գրականությունը, որպեսզի ընթերցողն արագորեն իմանա, թե իրեն ինչն է մատչելի (էջ 5):

Կազմողի համոզմամբ՝ այս մատենագիտությունն զգալի պակասներ ունի, բայց ունի նաև գործածականությունն ապահովող երկու կարևոր արժանիք:

ա. Վահան Ինգլիզյանի երկի հրապարակումից (1963 թ.) հետո արևմտյան որևէ լեզվով հայ գրականության կարևոր հետազոտություն լույս չի տեսել. ներկա մատենագիտությունն էլ նույն գրականության պատմության ընդարձակ շարադրանք լինելու հավանություն չունի, այլ՝ զուտ տպագիր նյութի տեղեկատու ուղեցույց է. ավելին՝ նպատակ չունի վճռելու

դեռևս բանավեճեր առաջացնող վերադրումներ, թվագրումների և վավերականության բազմաթիվ խնդիրներ:

բ. Իրավացիորեն լիահույս է, որ իր ժողոված նյութն օգտակար է լինելու քննական կամ մեկնական ընդարձակ գործեր ձեռնարկողներին, օրինակ՝ առանձին հեղինակներով ու բնագրերով զբաղվողներին:

Այս վերջին վկայակոչումներն այլևս կասկած չեն թողնում, որ Ռ. Թոմսոնի աշխատությունը հասցեագրված է արևմտյան՝ եվրոպամերիկյան ընթերցողին, ավելի շատ՝ նույն լեզուները կրող՝ սկսնակ հայագետներին (շուտով կտեսնենք, որ սա կազմողի ինչ-որ տեղ ավելորդ համեստության արտահայտությունն է):

Մատենագիտությունն ունի լիովին տրամաբանական, մտածված և հետևողական կառուցվածք. նախ՝ հետևյալ մուտքային-նախապատրաստական բաժինները. «Առաջաբան» (էջ 5—6), «Շնորհակալիք» (7—8), «Տառադարձություն» (9), «Ընթերցողին» (10), «Համառոտագրություններ» (11—5), «Հայ գրականության մատենագիտություններ» (16—9), «Հայ գրականության ընդհանրական տեղեկատու աշխատություններ» (20—1), «[Հայ գրականության] ավելի կարճ շրջանների հետազոտություններ» (22—7):

Բուն մատենագիտությունը, որի կառուցվածքի սկզբունքը հիմնականում այբուրենական է, ընդգրկում է, բնականաբար, գրքի ծավալի մեծ մասը (29—288) և ունի երեք բաժին.

ա. Թարգմանական մատենագիտություն. «Հայերեն թարգմանություններ հունարենից, ասորերենից և այլ լեզուներից» (29—88)՝ Արդի-չ-Ջենոբիոս Գաղիբաջի:

բ. Ինքնուրույն. «Հայ հեղինակներ (նկարաչալ՝ ըստ վերնագրերի թվարկված անունն աշխատությունները)» (89—231)՝ Արրահամ Անկյուրացի—Ջենոբ Գլալի Ամեն անվան հաջորդում է գերհամառոտ՝ շուրջ 1—10 տողանոց կենսագրական ծանոթություն. «Ակալիոս Մելիտինացի. Մելիտենի կաթսկույոս Ե. դ. առաջին կեսին», «Առաքել Սյունեցի. կրոնական բանաստեղծ, ԺԴ դ. կեսից 1422 թ. Քեռորդի Գրիգոր Տաթևացու Սյունյաց կաթսկույոս 1407 թվականից»:

գ. «Առարկայական մատենագիտություն» (Bibliographies by Topics), որ կարելի է պայմանականորեն կոչել «Ժողովածու-Միսականք» (233—88) և որն ունի հետևյալ ենթավերնագրերը. Անկանոն գրքեր, Աստվածաշունչ, Մեկնություններ, Առակներ, Աշխարհագրություն, Քերականություն (ներառյալ՝ լեզու, բառարանագրություն, ճարտասանական), Վկայարա-

3 Այսուհանդերձ, քննականաբար, «Մատենագիտություն» մեջ նշանակված նյութի զգալիորեն մեծ մասը Հայաստանում և հայերեն տրված գրականությունն է: Հանրահայտ է, որ այս նույն շրջանի ուսուսուցող հայագիտությունը նույնպես հիմնականում ստեղծվել է Հայաստանում:

4 Նույն պատճառով էլ հայերեն խորագրերը տրված են լատինատառ տառադարձությամբ, որպեսզի հեղինակների անուններն ու խորագրերն օգտագործողի աչքին ավելի դուրսնանալի լինեն:

5 «Die Armenische Literatur. — Handbuch der Orientalistik. I Abteilung. 7. Band, ed. G. Dece et al., Leiden und Cologne, 1963, pp. 156—272. Թոմսոնն անմիջապես նշում է նաև 30 տարով ավելի նորը. «Բայց այժմ տե՛ս Ch. Renoux. Langue et Littérature arméniennes.—Christianismes orientaux, ed. M. Albert et al., Paris, 1993, pp. 109—166.

նությունը, Պատմագրություն, Իրավունք (կանոնական, աշխարհիկ, արտասահմանի հայ համայնքների), Պատարագ (Հանդանակ, Շարական, Հաշոց, Հայամավուրթ), Բժշկություն, Առասպելք, Դիցաբանություն, Իմաստասիրություն, Գիտություն (ներառյալ՝ Աստղագիտություն, Տոմար, Մաթեմատիկա)։

Ցանկերն ընդամենը Երկուսն են. ա՝ «Գըլխավոր», որ ընդգրկում է հին և միջնադարյան հեղինակների, ծիսական ժողովածուների անունները և անհեղինակ գործերի վերնագրերը. բ՝ «Ժամանակակից հեղինակներին», ուր կան հին բնագրերի բոլոր հրատարակիչները, թարգմանիչներն ու հետազոտողները (1180 անուն)։

Հանրահայտ է, որ Հ. Անասյանի Երկհատոր կոթողային գործը՝ «Հայկական մատենագիտություն. Խ-ԺԴ դդ.» (Երևան, 1959, 1976), նույնպես հիմնականում հայ մատենագրության մատենագիտություն է։ Եվ բնական է, որ Թոմսոնը լավատեղյակ է Անասյանի աշխատությանը (այն համարում է լավագույն աղբյուր և մեծապես օգտվել է նրանից), որի համեմատ իր ներկա գործի հիմնական սկզբունքային տարրերությունն անտիպ նյութի ընդգրկման բացառումն է։ Հասկանալի է, որ հեղինակը սա աղբյուր է նաև արագորեն իր նպատակին հասնելու՝ տեղեկատվություն հնարավոր չափով շուտ արևմտյան հետազոտողին տալու համար, այդ պարագայում էլ խոստովանում է, որ այս մատենագիտությունը միջանկյալ գիրքի ու չափի մեջ է։

Այսուհանդերձ, Անասյանի տպագրված հատորների և Թոմսոնի մատենագիտության անունների թեթևակի համադրմամբ փորձենք տեսնել, թե անտիպ նյութը չընդգրկող Հայ մատենագրության մատենագիտությունը հեղինակների և նրանց Երկերի ինչպիսի պատկեր կարող է ունենալ։

ա. Թարգմանական Երկերի բաժնի առաջին անվան՝ Արդիշո Ասորի Լալիսկույոսի (VI դար) առիթով Ռ. Թոմսոնը նշում է միայն՝ «Նրա նամակների հայերեն տարրերակները՝ Գիրք թղթոց, էջ 62—9»։ մինչդեռ Անասյանը (Ա, էջ 37—8), 5 միավոր գրականություն նշելուց առաջ, թվարկել է 4 նամակ, հղել նրանցից մեկի գերմաներեն թարգմանությունը (Ե. Տեր-Մինասյան, Լալիսկի, 1904), որ Թոմսոնը չունի, սակայն պետք է ունենար՝ առաջին հերթին արևմտյան լեզուներով եղած նյութերը նշանակելու իր ծրագրի համեմատ։

բ. Ակադեմիկոս Կոստանդնուպոլսեցու համար Անասյանը (Ա, էջ 483—8) թվարկել է նրա և Պետրոս Մոնղոսի 18 թուղթ, հիշատակել Ֆ. Կոնիքիի՝ նույն թղթերի անգլերեն թարգմանու-

թյունը (Զիկագո, 1905), Ն. Ակինյանի «Կիրիոն կաթողիկոս Վրաց գործը և Մ. Չամչյանի «Պատմութեան» համապատասխան տեղիները, իսկ Բոմսոնը՝ Գիրք թղթոց, էջ 245—75, Կոնիքիի թարգմանությունը և նույն Ակինյանի ու Պ. Տեր-Պողոսյանի՝ խնդրին վերաբերող նորագույն ուսումնասիրությունը (ՀԱ, 1974, էջ 1—30)։

գ. Ատտիկոս Կոստանդնուպոլսեցին (Պոլսի պատրիարք 405—425 թթ.) Թոմսոնի գործում (էջ 35) հանդես է գալիս իր Երկերի պատմությունում՝ Տիմոթեոս Կուղ, Հակաճառության, էջ 30, 73, Մինչ Անասյանը (հ. Ա, էջ 717—20) ներկայացնում է տպագիր տեսքով առկա հետևյալ տեղեկությունները. Ատտիկոսի և Սահակ Պարթևի թղթակցությունը ներկայացված է՝ Խորենացու Պատմության Բ գրքի Մէ գլխում, Տիմոթեոսի Հակաճառության մեջ առկա հատվածները կան նաև՝ Կյուրեղ Աղեքսանդրացի, Գիրք պարապմանց (Պոլիս, 1717, էջ 210), իսկ բնագիրը կա՝ Յ. Մանսիի Sacro-sancti conciliorum գործի (հ. Գ, Ֆլորենցիա, 1760, էջ 1193—6) և Մինևի Patrologiae cursus completus, ser. gr.-ի մեջ (հ. 78, Փարիզ, 1859, էջ 1213)։ Ատտիկոսի մասին մատենագրական տեղեկություններ ունեն Թովմա Մեծոփեցին (Պետրոսբուրգ, 1887, էջ 72), Կիրակոս Գանձակեցին (Երևան, 1961, էջ 31), Կուրյունը (Երուսաղեմ, 1930, էջ 35—6), Սուրբատ Սրուստիկոսը (Վաղարշապատ, 1897, էջ 2—4, 13—4, 17—8, 21, 25, 28, 37, 41), Վարդան Արենցի (Վենետիկ, 1862, էջ 52), «Պատմութիւն Յովհաննու Ոսկեբերանի» (Վենետիկ, 1752, էջ 249)։ Կա նաև Ատտիկոսին վերաբերող գրականություն. Աճառյան, Անձնանունների բառարան (հ. Ա, Երևան, 1942, էջ 261), Գ. Զարպանալյան, «Մատենագրան հայկական թարգմանութեանց նախնեաց» (Վենետիկ, 1889, էջ 317—8, 517), Մ. Չամչյանց, «Պատմութիւն Հայոց» (հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 503—6), Բ. Սարգիսյան, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենագրանին Մխիթարանց ի Վենետիկ» (հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1289)։

դ. Արրահամ Անկյուրացի հեղինակի առումով, Հ. Անասյանի Մատենագիտության համեմատ, Թոմսոնի գործն ունի հետևյալ պակասները. Պոլսի առմանը նվիրված ողբի՝ Ք. Պատկանյանի (Նշխարք մատենագրության Հայոց, Պետրոսբուրգ, 1884, էջ 59—64), Կ. Սասունիի (Գրական դոհարներ միջնադարյան աշխարհաբար գրականության և ժողովրդական բանահյուսության, Բելյուսով, 1949, էջ 186—90) հրատարակությունները, Մ. Բրոսեի ֆրանսերեն

Թարգմանությունը (Lebeau, Histoire du Bas-Empire..., t. 21, Paris, Chez Firmin Didot freres, 1836, p. 307—14): Պուսի ան-մանը վերաբերող Ողբի առիթով Թոմասներ հիշատակել է Տ. Պալլանի «Հայ աշուղ-ներ» (տետր Ա, Զմյուռնիա, 1911) գրքի 20—35 էջերը, սակայն նրա ընթերցողը չի կարող իմանալ, որ սրա 32—5 էջերում տպագրված է հեղինակի երկու այլ տաղ: Զգալի պակասներ կան նաև հեղինակին վերաբերող գրականության նշանակալի առումով (Ալիշան, Աճառյան, Զարդանյան, Վ. Թորգոմյան, Պ. Քերեսթեճյան և այլն):

Լ. XIV դ. հեղինակ Ավետիք Օգոստին Կար-նեցին (Անասյան, Բ, էջ 1023—6) ունի տպագրված երեք գործ (Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, պրակ Դ, Վաղարշապատ, 1903, էջ 54—6 և Հանդես մասօրյա, 1948, էջ 590—1), այլևս՝ մի հոգվածում՝ մենք ներկայացրել ենք նրա ևս 4 անտիպ գործ, սակայն Թոմաս-նի մատենագիտության մեջ այս մատենագրի անունն ընդհանրապես չկա:

Նույնպես չկան նաև Անատոլիոս Բերյուտա-ցի (Անասյան, Ա, էջ 832—45), Անատոլիոս Եպիսկոպոս (Անասյան, Ա, էջ 845—6) և այլ անուններ:

Այս օրինակները ցույց են տալիս, որ Թոմ-սոնի Մատենագիտությունը տպագիր նյութի առումով նույնպես լիովին չի վերարտադրել Անասյանի հրատարակված հատորների ունե-ցածը, իսկ սա նշանակում է, որ հայագիտա-կան նյութի հետազոտություն սկսող մասնա-գետն իր գործին վերաբերող կատարյալ տե-ղեկություններ ունենալու համար Թոմսոնի մա-տենագիտությունից պետք է անցնի Հ. Անաս-յանի կոթողային գործին (տպված՝ Ա. Վ. — Բևաթրիկե Հոռմայեցի սահմաններում):

Մի այլ հանգամանք. մինչև 1500 թ. ապ-րած օտար այն հեղինակները, որոնց երկերը հայերենի են փոխադրվել 1500 թ. հետո, այս մատենագիտության մեջ արտահայտված չեն. գուցե Գ. Բարդաղյանի հատորի մեջ են ար-տացույցվելու. սա, առնվազն, շփոթությունների առիթ է տալու նույնպիսի անորոշություն է առաջացնում նաև այն հանգամանքը, որ զուտ Լեոնակյական պատճառներով հայ մատենա-գրության (հին գրականության) մատենագի-տությունը ենթարկվել է մեքենայական բաժան-

ման՝ մինչև 1500 թ. և 1501 թ. հետոյի նրևի հենց այս պատճառով՝ կա նաև ժամանակա-գրական սխալներ. նոր Զուղայում XVIII դա-րում ծնված և մինչև ղենդ Քերիմ խանի օրերին (1760—79) հասնող «Պատմություն Պարսից» խորագրով աշխատություն հեղինակած հայա-տուր Զուղայեցին (տե՛ս շՄՀ, հ. 5, Ե., 1979, էջ 23), այստեղ (էջ 214)՝ իր երկի տպագրի (հրատ. Բ. Վ. Աղավելյանց, Վաղարշապատ, 1905) մատենանշումով ներկայանում է որպես XV դարի հեղինակ:

Ավելին, վարքագրական-վկայարան ա կ ա ն նյութը Հ. Անասյանը ներկայացնում է հերոս-ների անուններով, իսկ Թոմսոնի գործի մեջ ամ-բողջն արտահայտված է ժողովածուների շար-քի՝ դերհամառոտ «Վկայարանականք» ենթա-բաժնի մեջ. այսինքն՝ օրինակ, Պիոն քահա-նայի վարքով հետաքրքրվողն այս մատենագի-տության մեջ փնտրելիք չունի:

Այս օրինակների մեծ մասն Անասյանի Մա-տենագիտության հետ պատահական ընտրու-թյամբ արված համեմատության արդյունք է: Ներկայացնենք այդ սահմանից դուրս արված մի այլ ստուգում. մենք ունենք Փափստոս Բու-զանցի՝ ղեկուս անավարտ հետազոտական մի մատենագիտություն, որի համեմատ Թոմսոնը (էջ 185—7) չունի հետևյալը. Վենետիկի 1832, 1889, 1914, 1933 թթ.՝ իրար չիրկնող, Թիֆ-լիսի 1913 թ. հրատարակությունները. նկա-տենք՝ փափստոսագիտությունն ընդհանրապես հիմնված է վենետիկյան և նրանց առաջինից ածանցված՝ Ք. Պատկանյանի (Ս. Պետեր-բուրգ, 1883) հրատարակությունների վրա: Այ-լև՝ հետազոտական նյութերի (գիրք, հոգված և այլն) մեր ունեցած ավելի քան 240 միա-վորի դիմաց Թոմսոնն ունի ընդամենը 47 անուն:

Առանց պատճառաբանելու, Թոմսոնը հայտ-նում է, որ «Ժողովածոյք-Միսականք» (Bibl. o- graphies by Top cs) բաժինը կազմվել է մատենագիտական նյութի կանխատեսված՝ հսկայաքանակ կրճատումով (էջ 5): Այսուհան-դերձ, մենք չկարողացանք պարզել գոնե մի օրինակափոխություն, որով Հ. Անասյանի «Հայ-կական մատենագիտության»՝ «Աստուածաշունչ մատենան. հայկական բնագիր»՝ 360 մեծագիր սյունակի կամ նույնպիսի 180 էջի ծավալ ունե-ցող մատենագիտության (հ. Բ, էջ 309—668) հսկա նյութը համառոտվել և Թոմսոնի գործի մեջ ամփոփվել է 11 էջի (239—49) մեջ:

* * *

Անկախ այս օրինակներից և անկախ Թոմ-սոնի մատենագիտության փաստից, Լեոնակյա-ն

6 Տե՛ս մեր նոր տեղեկություններ երկու հայ միարարների մասին. Ա) Ա վ ե տ ի ս Օ գ ո ս-տ ի ն Կարենցի, Բ) Հոփսեփ (Հովսեփ) Ապա-րաներցի. — «Արարեր հասարակական գիտու-թյուններին» 1980, № 10, էջ 81—8:

հրատարակվի հայ մատենագրությանը վերաթերադարձը հետադոտություն, որի հեղինակը հայտարարած կլինի, թե իր գործը հանված է միայն տպագիր նյութի վրա, ապա, անկասկած, մասնագետ ընթերցողն առաջին հերթին կմտածի, թե սա ո՞չ համապարփակ, այսինքն՝ ո՞չ անթերի դրոշ է (աղբյուրագիտորեն շատ արժանավոր ընթերցողին վերաբերող բացառություններ, անկասկած, կլինեն)։

Հայ մատենագրության մատենագիտության լավագույն, ցանկալի և ձգտելի նմուշը մնում է Հ. Անասյանի «Մատենագիտությունը», նկատենք, որ նույն ոճով ու լրջմտությամբ այն շարունակելը հայ բանասիրության կարևորագույն անելիքներից մեկն է. ըստ այսմ և ներկայացնենք դրա հղանակներին վերաբերող մեր որոշ դիտարկումները։

Բարձր գնահատելով հանդերձ այս գործը («Հակոբ Անասյանի կյանքի օրոք լույս է տեսել նրա փառավոր Մատենագիտության (ափսիքի հիշատակ Մատենաբանության) միայն երկու հատորը, որ հասել է ընդամենը «Բնատրիկե» հոդվածին»՝ էջ 6), Թոմսոնն ունի նաև մի եզրակացություն. բանի որ հայ մատենագրության (նաև՝ Անասյանի Մատենագիտության) մեջ անտիպ և աղբյուրագիտորեն շփոթված նյութը շատ մեծ է, ուրեմն՝ «Անհավանական է թվում, որ այս ձեռնարկումն ավարտվի մերձավոր ապագայում»։ Նրա իրավացի համոզմամբ՝ ղեկնս պետք է արվի մեծարանուկ անտիպ նյութի անհրաժեշտ քննություն, որովհետև անտիպ բնագրերը և նրանց չվճարված խնդիրներն այնքան շատ են, որ նրանց վերջնական ամփոփումն արվելու է ոչ միտակա ապագայում։

Ավելացնենք նաև այն հանգամանքը, որ պակաս մեծ չէ նաև ղեկնս չնկարագրված ձեռագիր նյութը. թե՛ն, անդամ, ավելի փորձավոր հավաքածուները նկատի չունենանք, ապա հայերեն ձեռագրական հարստության կեսից ավելին ամփոփող՝ Մաշտոցյան Մատենադարանի խոշորագույն հավաքածուն ղեկնս մանրամասն նկարագրություն չունի։ Այս պատճառով էլ Անասյանը, իր հիմնական նպատակակետին հասնելու՝ մատենագիտական հստակ պատկեր դնելու համար, ստիպված էր հաճախ նախապես անելու անտիպ նյութի նախապատրաստությունը՝ նկարագրումն ու նրա աղբյուրագիտական խնդիրների պարզումը։ Նրա «Մատենագիտության» պատրաստության երկարաձգման և անավարտ մնալու հիմնական պատճառներից մեկը հենց սա՝ էր։

Ավելացնենք նաև հետևյալը. հատկապես ուշ միջնադարի՝ XVI—XVIII դարերի շատ հեղինակների և թարգմանիչների գործերի զգալի

մասը այս կամ այն հավաքածուի մեջ պահպանվել է եզակի հեղինակային օրինակներով (կրկնօրինակվելու ժամանակն է կարճ եղել կամ առիթը չի ներկայացել)։ Ըստ այսմ՝ մեր մատենագրության որևէ մատենագիտություն կատարելության ձգտել կարող է միայն ձեռագրական բոլոր հավաքածուների, նաև՝ անհատ մարդկանց՝ պատկանող կամ և՛րոպական ու ամերիկյան աճուրդներում թափառող առանձին միավորների կանոնավոր նկարագրությունների գիտական մշակումից հետո։

Իրերի այս կացությունը թվագրում է, որ Անասյանի սկզբունքով, մանրամասնությամբ և հետևողականությամբ «Հայկական մատենագիտությունը» շարունակուց առաջ և նրան զուգընթաց պետք է առավել արագ շարունակվի հայերեն ձեռագրական հարստության մանրամասն նկարագրության ուղղությամբ արվող աշխատանքը, որ, բարեբախտաբար, վերջին տարիներին զգալի առաջընթաց է ապրել։ Այսպես. Ն. Պողարյանի անդուլ ջանքերով արդեն ավարտվել է Երոսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի հավաքածուի նկարագրությունը (11 ստվար հատոր), Սահակ վ. Ծնմանմյանի անմնացող նվիրումի շնորհիվ Վենետիկի Մխիթարյան ձեռագրացուցակի եռահատորյակը և՛րեր տարում կրկնապատկվեց⁸, Հարություն

7 Հատկապես մեր օրերին՝ երբ Հայաստանում, այլ արժեքների հետ միասին, նվիրական սնդուկներից հանվում են նաև նորահայտ շատ ձեռագրեր, անպայման արժեք շարունակել «Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց» կարևոր ձեռնարկումը, որ գործողումների ընթացքում և առիթի բերումով Մաշտոցյան Մատենադարանի գիտնականների տեսած ու նկարագրած ձեռագրերի ցուցակն է (Բանբեր Մատենադարանի, հ. 13, 1980, էջ 298—333. հ. 14, 1984, էջ 257—75. հ. 15, 1986, էջ 339—52)։

8 Գրախոսության շարադրման օրերին՝ 1996 թ. հոկտեմբերի 12-ին, ստացանք մեր վաղեմի բարեկամի՝ Ս. վ. Ծնմանմյան բազմադյուն հոգևորական-գիտնականի վաղածամ հանգիստ անսպասելի դուլժը. մինչդեռ նրա՝ 1996 թ. հունիսի 25-ին Վենետիկի Մխիթարյան միաբանության արքայալուսնի ընտրվելը շատերին ուրախացրեց։ Իրենից ստացած վերջին նամակներում ասում էր, որ լիովին պատրաստ է ձեռագրացուցակի է, կիսով չափ Ը՝ հատորը, և մտադիր է հավաքածուի ցուցակագրումն ավարտելու վերջին՝ Թ հատորով։ Ուզում ենք վստահ լինել, որ միաբանություն

Գեորգյանի, Արմեն Տեր-Ստեփանյանի և Բենար Ուտիեի շնորհիվ շուտով կհրապարակվի նաև Փարիզի Ազգային գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի (354 միավոր) մասնաժամանակը, Վրեժ Ներսիսյանը (Ներսես քահանա Ներսիսյան) պատրաստում է Անգլիայի տարածքում գտնվող ձեռագրերի նկարագրությունների մի հատոր, նույնպիսի աշխատանքի է լծված նաև Գարրիելա Ուլուհոն-Յանը, որ նկարագրում է Իտալիայի գրադարանների հայերեն ձեռագրերը, մենք էլ սկսել ենք ավարտուն տեսքի բերել Թիֆլիսի (310 միավոր), Մոսկվայի (41 միավոր)⁹ և Կազանի (4 միավոր) հավաքածուների ցուցակները: Կարևոր անելիք է նաև Պետերբուրգի՝ մոտ 500 ձեռագիր ամփոփող հավաքածուների ցուցակագրումը¹⁰: Բայց այսօր առավել առաջնահերթը Մաշտոցյան Մատենադարանի մանրամասն ձեռագրացուցակի՝ դեռևս հիմնականում Օնենկ Եզանյանի ջանքերով կազմված և վաղուց պատրաստ Բ—Ջ հատորների տպագրումն է:

Վերն ակնարկված՝ ձեռագրերի կանոնավոր նկարագրությունների գիտական մշակման ըսկիդրն էլ, որ, «Հայկական մատենագիտության» շարունակման կատարելությանը մեծապես նըպաստելուց բացի, անպայման ունենալու է նաև ինքնուրույն մեծ արժեք, պատկերացնում ենք հետևյալ ձևով: Հնարավոր չափով շուտ և, անպայման, համակարգչային եղանակով, պետք է սկսել հրատարակված բոլոր ձեռագրացու-

արվածը հրատարակելու է շուտով, իսկ չարված փոքր մասի (մեկուկես հատոր) պատրաստումը կազմակերպելու է մոտ ապագայում:

9 Թիֆլիսի (ունեցած 310-ից 296-ի) և Խուսաստանի Պետական (նախկին՝ Լենինյան) գրադարանի (ևղած 28-ից 24-ի) հավաքածուների ղեկավար մասի նախնական նկարագրություններն արել է Մաշտոցյան Մատենադարանի հանգուցյալ աշխատակից Ս. Լալաֆարյանը: Խուսաստանի Պատմության պետական (9 միավոր), Արևելյան ժողովուրդների արվեստների (4 միավոր) թանգարանների և Կահանի համալսարանի գրադարանի (4 միավոր) ձեռագրերն էլ նկարագրել ենք մենք:

10 4. Յուրբաշյանի կազմած գերհամառոտ ցուցակը (Ներսեսի Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակների հավաքածուի Հմր 172) շատ հեռու է ընդունված՝ բավարար մանրամասնությունից:

ցակների միասնական ցանկերի¹¹ կազմման աշխատանքը, Իսկ որպես սրա օրինակության նմուշ պետք է ընդունել Մաշտոցյան Մատենադարանի ընդարձակ ձեռագրացուցակի՝ Օ. Եզանյանի մտահղացած և իրագործած ցանկերի սկզբունքներն ու տեսականին. Գրություն ժամանակագրական նախագաղափար և հետագա հիշատակարանների, Նյութերի, Տեղանունների ընդհանուր, Անձնանունների ընդհանուր, Գրություն վայրերի, Գրիչների, Ծաղկողների, Կազմողների, Պատվիրատու-ստացողների, Մանրակարների, Կնքագրողների, Գաղտնագրություն ունեցող ձեռագրերի, «Ի մի տփ»՝ ձեռագրերի, Մետաղե կրկնակազմեր, Խաչեր և այլ զարդեր ունեցող ձեռագրերի, Ձեռագրերի ընդհանուր աղյուսակ, Պատմիկ-պահպանակների ընդհանուր աղյուսակ¹²: Առաջաբանային անհրաժեշտ բացատրականով վերջին հատորին են թողնված ձեռագրերի նոր և հին (նաև՝ նախկինում այլ հավաքածուների մեջ ունեցած) համարների զուգահիշ ցանկերը, որոնց կազմումը միշտ մեծ արժեք ունի որևէ հավաքածուի գոյացման, ավելի «իշտ» հայերեն ձեռագիր գրադարանների պատմության հետազոտման համար:

Ցանկերի անունների այս սյուրը թվարկումն իսկ ցույց է տալիս, թե միջնադարյան հայ գրական մշակույթի հետազոտման ամենատարբեր ասպարեզների համար որքան մեծ և ընդհանրական արժեք կարող է ունենալ այսպիսի ծրագրով կազմվելիք՝ հայերեն բոլոր ձեռագրացուցակների միասնական ցանկերի հատորաշարը: Անտիպի պետք է համարել որոշ մասնագետների կասկածը, թե գուցե Անձնանունների և Տեղանունների ընդհանուր ցանկերից արտածվող՝ Գրություն վայրերի, Գրիչների, Ծաղկողների, Կազմողների և Պատվիրատու-ստացողների ցանկերի ստեղծումն ավելորդ կրկնություն է, որովհետև հենց սրանց ստեղծման ընթացքում պարզվելու են ձեռագրագիտական, բանասիրական և աղբյուրագիտական շատ

11 Բրիտանական գրադարանի լատինատառ ձեռագրերի ցուցակների միայն ցանկերն ունեն 10 սովոր հատորի ծավալ՝ Index of Manuscripts in the British Library, Vol. I—X, Cambridge, 1981—1986:

12 Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զևթունյան, Փ. Անթարյան. Խմբագրություն՝ Ա. Մնացականյանի, Օ. Եզանյանի. Երևան, 1984, էջ 1249—1468:

Հարցերու Գործի Հեռանկարի նկատմամբ տարակուսելու առիթ չպէտք է լինի նաև արվելիք աշխատանքի և ստացվելիք հատորների ծավալի մեծությունը, քանզի՝ մի կողմից համակարգչային եղանակի կիրառումը յատուկ արագացնելու խմբովին արվելիքը, մյուս կողմից՝ ինքնին համակարգչային շարվածքը նույն համակարգչով արդեն իսկ լիարժեք օգտագործելի նյութ է լինելու, ուստի և հնարավոր մեծածավալ տպագրության թանկությունից վախենալ պետք չէ:

Իսկ Մատենագիտության շարունակման աշխատանքը մեծապես դյուրացնելու ևն բավական աշխատատար երկու այլ՝ բնագրերի նորագրերի և Սկզբնատողերի ցանկերը, որոնց կազմման ընթացքում արդեն անհրաժեշտ է լինելու նրանց տվյալների համադրումը և միմյանց հետ ղուգորդումը և որով պարզվելու ևն շատ բնագրերի հեղինակային պատկանելության և ժամանակագրական բացմաթիվ կրնալուն:

Այս ամենին, անկասկած, պետք է նախորդի աշխատանքի հստակ ծրագրի և սկզբունքների մշակումը, նրա համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերի պատրաստումը, գոյություն ունեցող և ցանկագրվելիք բոլոր ձեռագրացուցակների՝ հեղինակային ճանաչելի համառոտագրությունների հստակ ցանկի կազմումը, վերջում, ըստ այս ամենի՝ աշխատանքի կանոնավոր ընթացքի և բաշխման ճշտումը:

* * *

Ամփոփելով. Թոմսոնի մատենագիտությանը վերաբերող՝ փաստերի մեր մատնանշումներն ամենևին թերությունների արձանագրումներ չեն և, առավել ևս, նրա կատարած իսկապես

շնորհակալ աշխատանքը նսեմացնելու նպատակ չունեն: Դրանք նրա համար են, որպեսզի վերահաստատենք գործի առաջարանք մեջ արված վերապահումները, ավելին՝ մի ավելորդ անգամ ևս շեշտելու, որ Անասյանի Մատենագիտության տեր Հայագիտությունը միջանկյալ մատենագիտություններ, անգամ՝ ներառյալ, կարող է ունենալ, բայց նրանցով բավաբարվելու իրավունք չունի. այսինքն՝ պարտավոր է այս կոթողային գործի շարունակումը համարելու իր առաջնահերթ անելիքներից մեկը:

Իսկ մեր դաժնոսության առարկան իսկապես իրականացումն է հեղինակի կարևորագույն նպատակադրման. այն իրոք, լավ տեղեկատու է ոչ միայն արևմուտքի, այլև՝ հայաստանի հայագետների համար, նաև՝ լավագույն ամփոփումն է ժամանակակից հայաստանյան դասական հայագիտության ձեռքբերումների: Թե՛ վերջինիս, թե՛, առավել ևս, հայագիտական արևմտյան նորագույն հետազոտությունների այսօրվա համար կատարյալ տեղեկատու լինելու շնորհիվ, մեզ համար սա շատ մեծ արժեք ունի: Հենց սրա համար պարտավոր ենք միայն շնորհակալություն հայտնելու Ռոբերտ Թոմսոնին:

Ավելին՝ վստահ ենք, որ այս մատենագիտությունն արագորեն գտնելու է իր տեղը, իր թանելու է բնագրերի նոր գիտական հրատարակությունների և նրանց հեղինակներին վերաբերող ուսումնասիրությունների ստեղծմանը, քաջալերելու և ասպարեղ է բերելու նոր հետազոտողների թե՛ Հայաստանում և թե՛, առավել ևս, Հայաստանից դուրս:

Գ. Հ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ